ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 06.03.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/25

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ)՝ քննելով՝ «Խաչպար» ՍՊԸ-ի 16.02.2018թ. ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2018/25 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. «Խաչպար» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Խաչպար» ՍՊԸ-ն 16.02.2018թ. Խորհրդին ներկայացված բողոքով հայտնել է, որ «Աբովյանի ծննդատուն» ՊՓԲԸ-ի կարիքների համար քիմիական նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԱԲԾ-ԳՀԱՊՁԲ-18/03» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսհուտև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի թիվ 12-րդ չափաբաժնով պահանջվում է «Սուրֆանիոս» անվանումով ապրանքը, իսկ թիվ 17-րդ չափաբաժնով՝ «Անիոզիմ ԴԴ1» անվանումով ապրանքը, որոնք ախտահանիչ միջոցներ են հանդիսանում:

Այդ չափաբաժինների տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց Հավելված թիվ 1-ի գնման ենթակա «ապրանքի անվանումը և ապրանքային նշանը» սյունակում

Պատվիրատուն գրել է Սուրֆանիոս և Անիոզիմ ԴԴ1 բառերը, իսկ տեխնիկական բնութագիրը սյունակներում նշված են «1 լիտր» և «հեղուկ» բառերը:

Ընկերությունը հայտնել է, որ հայտ է ներկայացրել Ընթացակարգի թիվ 4, 12, 16, 17, 20, 25 և 33-րդ չափաբաժինների մասերով:

Ընթացակարգի թիվ 12-րդ չափաբաժնի «Ապրանքի անվանումը» սյունակում հրավերով պահանջված Սուրֆանիոս բառերից հետո Ընկերությունը նշել է՝ «.. համարժեք՝ Ամիքսան խտանյութ, 1լ» բառերը, իսկ թիվ 17-րդ չափաբաժնի «Ապրանքի անվանումը» սյունակում հրավերով պահանջված Անիոզիմ ԴԴ1 բառերից հետո նշել է՝ «.. համարժեք՝ Մեգաբակ խտանյութ, 1լ» բառերը:

05.02.2018թ. «Խաչպար» ՍՊԸ-ն ստացել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 3 արձանագրությունը, համաձայն որի «Խաչպար» ՍՊԸ-ն Ընթացակարգի թիվ 12-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է 2-րդ տեղ զբաղեցնող մասնակից, իսկ թիվ 17-րդ չափաբաժնի մասով՝ 1-ին տեղ զբաղեցնող մասնակից:

Այնուհետև Ընկերության կողմից Ընթացակարգի թիվ 17-րդ չափաբաժնի մասով ներկայացվել է համապատասխան փաստաթղթերը:

Ընկերությունը հայտնել է, որ 15.02.2018թ. ստացել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 4 արձանագրությունը և պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը, որի 1.2 ենթակետի համաձայն՝ «Խաչպար» ՍՊԸ-ի հայտը թիվ 17-րդ չափաբաժնի մասով մերժվել է և 2.1 ենթակետի համաձայն՝ թիվ 17-րդ չափաբաժնի մասով հաղթող մասնակից է ճանաչվել՝ 2-րդ տեղ զբաղեցրած մասնակից, «Արմենֆարմ» ՍՊԸ-ն, իսկ 2.1 ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ որոշվել է ընտրված մասնակիցների հետ պայմանագրեր կնքել անգործության ժամկետի ավարտից հետո:

Նույն կետերով կայացրած որոշումներով՝ գնահատող հանձնաժողովը մերժել է նաև Ընթացակարգի թիվ 12-րդ չափաբաժնի մասով 05.02.2018թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչված «Ադամանդ մեդ» ՍՊԸ-ի հայտը, որից հետո՝ օրենքով սահմանված կարգով, պարտավոր էր թիվ 12-րդ չափաբաժնի մասով 2-րդ տեղը զբաղեցրած մասնակցին՝ «Խաչպար» ՍՊԸ-ին ճանաչել որպես 1-ին տեղ զբաղեցրած մասնակից և նրան համապատասխան փաստաթղթեր ներկայացնելու պահանջ ներկայացներ, սակայն գնահատող հանձնաժողովը, խախտելով օրենքով սահմանված պահանջները, թիվ 12-րդ չափաբաժնի

մասով հաղթող մասնակից է ճանաչել 3-րդ տեղ զբաղեցրած մասնակցին՝ «Արմենֆարմ» ՍՊԸ-ին:

«Խաչպար» ՍՊԸ-ն հայտնել է, որ համաձայն չէ այդ որոշումների հետ և խնդրել է Խորհրդին փոփոխելու «ԱԲԾ-ԳՀԱՊՁԲ18/03» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 4 արձանագրությունով կայացրած որոշումները՝ թիվ 12-րդ և 17-րդ չափաբաժինների մասով:

Ընկերության կողմից որպես բողոքի իրավական հիմք և ապացույց նշվել է հետևյալը.

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից թիվ 12-րդ և 17-րդ չափաբաժինների մասերով «Ադամանդ-Մեդ» ՍՊԸ-ի և «Խաչպար» ՍՊԸ-ի հայտերը մերժելու համար հիմք հանդիսացած հանգամանքի և կոնկրետ տոկոսների առկայության մասին հղումները ներառված չեն Ընթացակարգի հրավերի թիվ 12-րդ չափաբաժնի «Տեխնիկական բնութագիրը» սյունակում, այսինքն՝ այդ պահանջների մասին ոչ մի մասնակից տեղյակ չի եղել, դրանք Պատվիրատուի մոտ ի հայտ են եկել միայն հայտերի գնահատման փուլում, ուստի այդ մերժումները անհիմն են, իսկ թիվ 12-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը կատարվել է «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 34-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված պահանջի խախտումով:

Ամփոփելով վերոգրյալը, Ընկերությունը հայտնել է նաև, որ Պատվիրատուն քաջածանոթ է «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգի հրավերի թիվ 17-րդ չափաբաժնի մասով պահանջված՝ Անիոզիմ ԴԴ1 անվանումով ապրանքին որպես համարժեք առաջարկած Մեգաբակ խտանյութ, 1լ անվանումով ախտահանիչ միջոցին, քանի որ նույն Պատվիրատուի կողմից 2016թ. դեկտեմբերի 5-ին՝ քիմիական նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարվել էր «ԱԲԾ-ՇՀԱՊՁԲ 03/17» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը, որի թիվ 29-րդ չափաբաժնում պահանջվում էր միևնույն՝ Անիոզիմ ԴԴ1 անվանումով ապրանքը, իսկ դեղաչափը և դեղաձևը սյունակներում նշված են միևնույն՝ 1 լիտր և հեղուկ բառերը, որոնք միևնույն ձևով առկա են «ԱԲԾ-ԳՀԱՊՁԲ18/03» ծածկագրով գնանշման հարցման հրավերի թիվ 17-րդ չափաբաժնի համապատասխան սյունակներում:

«Խաչպար» ՍՊԸ-ն մասնակցելով այդ մրցույթին, թիվ 22, 23, 24, 25, 26, 29 և 33-րդ չափաբաժինների մասով, ճանաչվել է հաղթող մասնակից թիվ 22, 24, 26, 29 և 33-րդ չափաբաժինների մասով և 2017թ. հուվարի 30-ին կնքվել է ԱԲՈՎՅԱՆԻ ԾՆՆԴԱՏՈՒՆ

ՊՓԲԸ-Ի կարիքների համար քիմիական նյութերի մատակարարման գնման N ԱԲԾ-ՇՀԱՊՁԲ 03/17-1 պայմանագիրը, որտեղ թիվ 29-րդ չափաբաժնում գրված են Անիոզիմ ԴԴ1 1լիտր-համարժեք՝ Մեգաբակ բառերը, կատարվել է 683000 ՀՀ դրամի մատակարարում, որից 277500 ՀՀ դրամը եղել է թիվ 29-րդ չափաբաժնում Անիոզիմ ԴԴ1 1լիտր-ին որպես համարժեք մատակարարած Մեգաբակ խտանյութ անվանումով ախտահանիչ միջոցը:

«Խաչպար» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 20.02.2018թ. ժամը 12:25-ի նիստի վերաբերյալ, տնօրենը ապահովել է իր մասնակցությունը, ով պնդել է բողոքով Խորհրդին ներկայացված դիրքորոշումը, ավելացնելով, որ Պատվիրատուի կողմից խախտվել է նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով և 2-րդ մասի 1-ին կետով սահմանված պահանջները:

2. «Աբովյանի ծննդատուն» ՊՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Աբովյանի ծննդատուն» ՊՓԲԸ-ն 22.02.2018թ. Խորհրդին ուղղված գրությամբ հայտնել է, որ «ԱԲԾ-ԳՀԱՊՁԲ-18/03» ծածկագրով մրցույթի թիվ 12-րդ և 17-րդ չափաբաժնի մասով մասնակցել են 3 ընկերություններ՝ «Խաչպար» ՍՊԸ-ն, «Արմենֆարմ» ՍՊԸ-ն և Ադամանդ Մեդ ՍՊԸ-ն:

Ընկերությունների կողմից մինչև հայտերի ներկայացումը չի ներկայացվել ոչ գրավոր, ոչ բանավոր որևէ բողոք տեխնիկական բնութագրերի և մրցույթի հրավերով սահմանված պահանջի վերաբերյալ, այսինքն՝ տեխնիկական բնութագրերը ընդունելի և հասկանալի են եղել բոլոր մասնակիցների համար:

Հաշվի առնելով ընկերությունների կողմից ներկայացված բացարձակ գնային առաջարկները՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 05.02.2018թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ թիվ 12-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչել «Ադամանդ Մեդ» ՍՊԸ-ին, երկրորդ տեղ՝ «Խաչպար» ՍՊԸ-ին, երրորդ տեղ՝ «Արմենֆարմ» ՍՊԸ-ին, իսկ 17-րդ չափաբաժնով առաջին տեղ է ճանաչվել Խաչպար» ՍՊԸ-ն, երկրորդ տեղ՝ «Արմենֆարմ» ՍՊԸ-ն:

Այնուհետև, հրավերով սահմանված պահանջի համաձայն՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցները ներկայացրել են իրենց կողմից առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը:

Պատվիրատուն հայտնել է, որ մասնագիտական տեսանկյունից ուսումնասիրելով առաջարկվող նյութերը և դրանց ՀՀ Առողջապահության Նախարարության մեթոդական հրահանգները, օգտագործման ռեժիմները, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը վերագնահատել և 15.02.2018թ. կազմել է նիստի թիվ 4 արձանագրությունը, համաձայն որի թիվ 12 -րդ և 17-րդ չափաբաժիններով առաջին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Արմենֆարմ» ՍՊԸ-ն:

Պատվիրատուի կողմից կայացված որոշման վերանայման հիմքեր նշվել է հետևյալը.

Ելնելով «Աբովյան Ծննդատուն» ՊՓԲԸ-ի հագեցվածությունից, գործընթացների բնույթից և ծավալներից, ախտահանման ենթակա ապրանքների առանձնահատկություններից, «Աբովյան Ծննդատուն» ՊՓԲԸ-ի համապատասխան մասնագետների կողմից կատարվել է ներկայացվող առաջարկների առավել մանրամասն ուսումնասիրություն:

Ներկայացված ախտահանիչների ախտահանման ռեժիմների ցուցիչները և ախտահանման համար պահանջվող ժամանակը, հիմք են հանդիսանում արագ ազդեցությամբ, անվտանգ, արդյունավետ և տնտեսական նպատակահարմարությունից ելնելով, վերջնական աշխանքային լուծույթի գնային հաշվարկի և ախտահանիչի ընտրության ժամանակ:

Վերջնական օգտագործման համար ստացվող ախտահանիչ աշխատանքային լուծույթի արժեքը ստանալու համար հաշվարկները կատարվել են համաձայն՝ ՀՀ Առողջապահության նախարարության կողմից յուրաքանչյուր ախտահանիչ միջոցի համար հաստատված համապատասխան մեթոդական հրահանգների և Հայաստանում գործող սանիտարական նորմերի՝ հիմք ընդունելով հակաբակտերիալ (ներառյալ տուբերկուլյոզը), հակավիրուսային և հակասնկային ախտահանման ռեժիմները:

Թիվ 12-րդ չափաբաժնի համար ներկայացված առաջարկների վերլուծություն.

«Արմենֆարմ» ՍՊԸ-ն առաջարկում է Սուրֆանիոս խտանյութը, որից մակերեսների բոլոր տիպի ախտահանումների համար, ըստ բակտերիաների (ներառյալ տուբերկուլյոզի), վիրուսների և սնկերի պատրաստում են 0,25%-ոց աշխատանքային լուծույթ:

Ախտահանման ժամանակը 60 րոպե:

Հիմք՝ Հավելված 2 ՀՀ առողջապահության նախարարի 2013 թվականի սեպտեմբեր 28-ի թիվ 2594-Ա հրամանի Աղյուսակ 2 «Սուրֆանիոս» ախտահանիչ նյութի կիրառման ռեժիմները.

Մշակվող մակերես	Աշխատանքային լուծույթի խտությունը (%)	Ախտահանման ժամանակ, րոպե								Ախտահանման տեսակը
		Բակտերիալ վարակներ	Տուբերկուլյոզ	Վիրուսային վարակներ					Կանդիդոզներ	
				Հեպատիտ B	Հեպատիտ C	ՄԻՎ-Վ	H5N1	H1N1		
Տարածքների մակերեսներ, կոշտ կահույք, սարքերի մակերեսներ, սանիտարական փոխադրամիջոց	0,5% 0.25%	15	30 60	5	5	5	5	5	15	Սրբում կամ ողողում
Սանիտարատեխնիկական սարքավորում	0,5% 0.25%	15	*30* *60*	5	5	5	5	5	15	Սրբում կամ ողողում

«Ադամանդ-Մեդ» ՍՊԸ-ն առաջարկում է «Աստրադեզ Լայթ» խտանյութը, որից պատրաստում են 2%-ոց աշխատանքային լուծույթ մակերեսների բոլոր տիպի ախտահանումների համար՝ ըստ բակտերիաների (ներառյալ տուբերկուլյոզի), վիրուսների և սնկերի:

Ախտահանման ժամանակը 60 րոպե:

Հիմք՝ ՀՀ Առողջապահության Նախարարության «Աստրադեզ-Լայթ» ախտահանիչ միջոցի կիրառման մեթոդական հրահանգ N 1208-Ա առ «29» մայիս 2014 թ.

Աղյուսակ 4. «Աստրադեզ-Լայթ» միջոցի լուծույթով տուբերկուլոզի ժամանակ օբյեկտների ախտահանման ռեժիմ.

Վարակազերծման օբյեկտ	Միջոցի աշխատանքային լուծույթի խտություն /%/	Վարակազերծ-ման ժամանակ /րոպեով/	Վարակազերծման մեթոդ
Սենքերի արտաքին մակերեսներ, կոշտ գույք, փոխադրամիջոցի օբյեկտներ	2.0 3.0 4.0	60 30 15	Շփում ողողում

«Խաչպար» ՍՊԸ-ն առաջարկում է Ամիքսան խտանյութը, որից պատրաստում են 2% -ոց աշխատանքային լուծույթ՝ մակերեսների բոլոր տիպի ախտահանումների համար՝ ըստ բակտերիաների (ներառյալ տուբերկուլոզի), վիրուսների և սնկերի:

Ախտահանման ժամանակը 60 րոպե:

Հիմք՝ << Առողջապահության Նախարարության «Ամիքսան» ախտահանիչ միջոցի կիրառման մեթոդական հրահանգ No 1791-Ա առ «10» հունիս 2016թ.:

Աղյուսակ 4: Օբյեկտների ախտահանման ռեժիմներ ախտահանիչ միջոցի լուծույթներով կանդիդոզների և դերմատոֆիտների ժամանակ.

Ախտահանման օբյեկտ	Աշխատանքային լուծույթի խտություն, %	Ախտահանման ժամանակ, րոպե		Ախտահանման եղանակ
		Կանդիդոզների ժամանակ	Դերմատոֆիտների ժամանակ	
Մակերեսներ սենքերում (հատակ, պատ և այլն), կահավորանքի առարկաներ, սարքեր, սարքավորում, սանիտարական փոխադրամիջոց միջոց	0,5 1,0 **2,0**	60 15 -	- 90 **60**	Շփում կամ ողողում
Սանիտարա-տեխնիկական սարքավորում	0,5 1,0 **2,0**	60 15 -	- 90 **60**	Շփում կամ ողողում

Աղյուսակ 2: Օբյեկտների ախտահանման ռեժիմներ ախտահանիչ միջոցի լուծույթներով մանրէային վարակների (այդ թվում տուբերկուլոզի) ժամանակ.

Ախտահանման օբյեկտ	Աշխատանքային լուծույթի խտություն, %	Ախտահանման ժամանակ, րոպե		Ախտահանման եղանակ
		Մանրէային վարակների (բացառությամբ տուբերկուլոզի) ժամանակ	Տուբերկուլոզի ժամանակ	
Մակերեսներ (բացառությամբ սալիկապատ, լինոլեումե, ներկած փայտից), հատակ, պատ և այլն, կահավորանքի առարկաներ, ապարատներ, սարքեր, սարքավորում, սանիտարական փոխադրամիջոց	0,1 0,25 1,0 1,5 **2,0**	60 15 - - -	- - 60 - **15**	Շփում կամ ողողում
Մակերեսներ (սալիկապատ, լինոլեումե, ներկած փայտից) սենքերում (հատակ, պատ և այլն), կահավորանքի առարկաներ	0,1 0,25 1,0 **1,5** **2,0**	60 15 - - -	- - 90 **60** **30**	Շփում կամ ողողում

Սանիտարա-տեխնիկական սարքավորում	0,1 0,25 1,0 **1,5** **2,0**	60 15 - - -	- - 90 **60** **30**	Շփում կամ ողողում

Աղյուսակ 3: Օբյեկտների ախտահանման ռեժիմներ ախտահանիչ միջոցի լուծույթներով վիրուսային վարակների ժամանակ.

Ախտահանման օբյեկտ	Աշխատանքային լուծույթի խտություն, %	Ախտահանման ժամանակ, րոպե	Ախտահանման եղանակ
Մակերեսներ սենքերում (հատակ, պատ և այլն), կահավորանքի առարկաներ, ապարատներ, սարքեր, սարքավորում, սանիտարական փոխադրամիջոց	1,0 **2,0** 3,0	60 **30** 15	Շփում կամ ողողում
Սանիտարա-տեխնիկական սարքավորում	1,0 **2,0** 3,0	60 **30** 15	Շփում կամ ողողում

Ըստ հրավերի 12-րդ չափաբաժնի պահանջը եղել է 70 լիտր խտանյութ:

Սուրֆանիոս 70 լիտր խտանյութից ստացվում է 0,25%-ոց 28000 լիտր աշխատանքային լուծույթ, որը անհրաժեշտ է բավարարելու համար «Աբովյան Ծննդատուն» ՊՓԲԸ-ի կարիքները:

Սուրֆանիոս 70 լիտրի (0,25% -ոց 28000 լիտր աշխատանքային լուծույթ) գնային առաջարկը կազմել է 617 400 << դրամ:

1 լիտր աշխատանքային լուծույթի արժեքը կազմում է 617400/28000= 22,05 դրամ:

«Աստրադեզ Լայթ» 70 լիտր խտանյութից ստացվում է 2%-ոց 3500 լիտր աշխատանքային լուծույթ, որը բավարար չէ «Աբովյան Ծննդատուն» ՊՓԲԸ-ի կարիքների բավարարելու համար:

«Աստրադեզ Լայթ» 70 լիտրի (2%-ոց 3500 լիտր աշխատանքային լուծույթ) գնային առաջարկը կազմել է 392 000 դրամ:

1լիտր աշխատանքային լուծույթի արժեքը կազմում է 392000/3500= 112 դրամ:

«Ամիքսան» 70 լիտր խտանյութից, ստացվում է 2% -ոց 3500 լիտր աշխատանքային լուծույթ, որը բավարար չէ «Աբովյան Ծննդատուն» ՊՓԲԸ-ի կարիքների բավարարելու համար:

«Ամիքսան» 70 լիտրի (2%-ոց 3500 լիտր աշխատանքային լուծույթ) գնային առաջարկը կազմել է 448 000 << դրամ:

1 լիտր աշխատանքային լուծույթի արժեքը կազմում է 448000/3500= 128 դրամ:

Պատվիրատուն հայտնել է, որ վերլուծելով վերոնշյալը, կարելի է տեսնել, որ «Աբովյան Ծննդատուն» ՊՓԲԸ-ի կարիքները հոգալու համար անհրաժեշտ վերջնական աշխատանքային լուծույթի ծավալը ապահովելու համար, «Աբովյան Ծննդատուն» ՊՓԲԸ-ն Աստրադեզ Լայթ կամ Ամիքսան խտանյութերը գնելու դեպքում պետք է գներ 8 անգամ ավելի շատ խտանյութ՝ 28000 լիտր վերջնական աշխատանքային լուծույթ ստանալու համար, և օգտագործել գնման համար համապատասխանաբար 3.136.000 << դրամ և 3.584.000 << դրամ:

Ամիքսան-28000 լիտր 2% աշխատանքային լուծութի գինը կազմում է՝ 3.584.000 << դրամ (28000 լիտր*128դրամ=3.584.000 դրամ)

Աստրադեզ Լայթ-28000 լիտր 2% աշխատանքային լուծութի գինը կազմում է՝ 3.136.000 << դրամ (28000լիտր*112դրամ=3.136.000 դրամ)

Սուրֆանիոս-28000 լիտր 0,25% աշխատանքային լուծութի գինը կազմում է՝ 617.400 << դրամ (28000լիտր*22.05դրամ=617.400 դրամ):

Այսինքն՝ ձեռք չբերելով Սուրֆանիոս խտանյութը, «Աբովյան Ծննդատուն» ՊՓԲԸ-ն չէր ապահովի իր կարիքները հոգալու համար անհրաժեշտ վերջնական աշխատանքային լուծույթի ծավալը, այն է՝ 28000 լիտր:

«Աբովյան Ծննդատուն» ՊՓԲԸ-ն 28000 լիտր վերջնական աշխատանքային լուծույթի ծավալը ապահովելու համար Աստրադեզ Լայթ կամ Ամիքսան տիպի ախտահանիչներ գնելու դեպքում համապատասխանաբար կկատարեր 2.518.600 դրամից և 2.966.600 դրամի գերածախս:

Հաշվի առնելով ստացվող վերջնական աշխատանքային լուծույթների արժեքները և ծավալների համեմատականը, «Աբովյան Ծննդատուն» ՊՓԲԸ-ի գնահատող հանձնաժողովը, վերագնահատել է մրցույթի արդյունքները և որպես մրցույթի թիվ 12-րդ չափաբաժնի հաղթող է ճանաչել «Արմենֆարմ» ՍՊԸ-ին:

Թիվ 17-րդ չափաբաժնի համար ներկայացված առաջարկների վերլուծություն.

Արմենֆարմ ՍՊԸ-ն առաջարկում է Անիոզիմ ԴԴ1 խտանյութը, որից բժշկական նշանակության գործիքների, էնդոսկոպների ախտահանման, նախամանրէազերծումային և էնզիմատիկ մաքրման համար, ըստ բակտերիաների (ներառյալ տուբերկուլոզի), վիրուսների և սնկերի պատրաստում են 0,5% -ոց աշխատանքային լուծույթ՝:

Ախտահանման ժամանակը 15 րոպե:

Հիմք: Հավելված 7 ՀՀ առողջապահության նախարարի 2013 թվականի սեպտեմբեր 28-ի թիվ 2594 -Ա հրամանի:

Աղյուսակ 2. Անիոզիմ ԴԴ-1 ախտահանիչ նյութի լուծույթների ձեռքի միջոցով ախտահանման ռեժիմները

Մշակվող օբյեկտներ		Աշխատանքային լուծույթի խտություն (ըստ պատրաստուկի),%	Վարակազերծման ժամանակ (րոպե)						Մշակման եղանակ
			Մանրէասպան տուբերկուլոզի վարակների (ճանաչված վիրուսների)	Տուբերկուլոզ	Վիրուսային վարակների, բացառությամբ վիրուսային հեպատիտների	Սուսլիկային տիպի հեպատիտների, ներառյալ վիրուսային	Սնկերի	Դերմատոֆիտիա	
Սարքավորումներ դրեկիկոդոշ դակիշիժբ ժամանակավորապես գիտանոց , ռետինից, պլաստմասսայից գիտանոց առարկաներ	լուսանցք, խոռոչ և կողպեք չունեցող գործիքներ	0,5	5	15	10	10	5	15	Ընկղմում
	լուսանցք, խոռոչ և կողպեք ունեցող գործիքներ	0,5	5	15	15	15	5	15	
	Էնդոսկոպներ	0,5	5	15	15	15	5	15	
	Նարկոզա-շնչառական ապարատի մասեր	0,5	5	15	15	15	5	15	
	Ատամնաբուժական նյութեր	0,5	5	15	15	15	5	15	

Աղյուսակ 3.

Անիոզիմ ԴԴ-1 ախտահանիչ նյութի լուծույթներով բժշկական նշանակության առարկաների նախամանրէազերծումային մշակման հետ համակցված ախտահանման ռեժիմները (ներառյալ՝ վիրաբուժական, էնդոսկոպների օժանդակ մասեր, ատամնաբուժական գործիքներ, այդ թվում պտտվող)

Մշակման փուլեր	Մշակման ռեժիմներ		
	Աշխատանքային լուծույթի խտություն (ըստ պատրաստուկի),%	Աշխատանքային լուծույթի ջերմաստիճան °C	Պահման ժամկետ/ մշակման, րոպե
Նկատառում * գործիքների աշխատանքային լուծույթի մեջ լրիվ ընկղմումով՝ լուսանցքների և խոռոչների ընկղմումով:	0,5	18 °C ոչ պակաս	15*
- պարզ կառուցվածք ունեցող (առանց լուսանցքների և խոռոչների), ատամնաբուժական գործիքներ			
- կողպեքային մասեր, լուսանցքներ և խոռոչներ ունեցող գործիքներ, ամալգամայով հայելիներ			
- էնդոսկոպների օժանդակ մասեր			
Յուրաքանչյուր գործիքի լվացումը նույն լուծույթում որտեղ կատարել են թրջում խոզանակի, բամբակյա վիրախծուծի, կամ կտորե անձեռոցիկի միջոցով (խողովակները՝ ներարկիչներով): • կողպեք, խոռոչներ և լուսանցքներ չունեցող գործիքներ, • կողպեք, խոռոչներ և լուսանցքներ ունեցող գործիքներ	0,5	Չի նորմավորվում	1,0 3,0
Ողողում հոսող խմելու ջրով (լուսանցքները ներարկիչների կամ էլեկտրական արտածծիչի միջոցով)	Չի նորմավորվում		3,0
Ողողում թորած ջրով (լուսանցքները ներարկիչների կամ էլեկտրական արտածծիչի միջոցով)	Չի նորմավորվում		1,0

Նկատառում.

*0.5% աշխատանքային լուծույթում գործիքների թրջելու փուլի ժամանակ ապահովվում է վերջիններիս ախտահանումը մանրէային (ներառյալ տուբերկուլոզը), վիրուսային (ներառյալ հեպատիտները, ՄԻԱՎ-վարակը, պոլիոմիելիտը), և սնկային (կանդիդոզներ և դերմատոֆիտիաներ) ծագումնաբանության վարկներից:

Խաչպար ՍՊԸ-ն առաջարկում է **Մեգաբակ** խտանյութը, որից պատրաստում են 3% - ոց աշխատանքային լուծույթ՝ գործիքների բոլոր տիպի ախտահանումների համար ՝ ըստ բակտերիաների (ներառյալ տուբերկուլյոզի), վիրուսների և սնկերի:

Ախտահանման ժամանակը 60 րոպե:

Հիմք՝ ՀՀ Առողջապահության Նախարարության «Մեգաբակ» ախտահանիչ միջոցի կիրառման մեթոդական հրահանգ No 1794 – Ա առ «10» հունիս 2016թ.

Աղյուսակ 18 Ախտահանիչ միջոցի լուծույթով բժշկական նշանակության իրերի ախտահանման ռեժիմներ տուբերկուլոզի ժամանակ

Ախտահանման օբյեկտ	Ախտահանիչ միջոցի աշխատանքային լուծույթի խտություն, %	Ախտահանման պահաժամ, րոպե	Ախտահանման եղանակ
Պլաստմասից, մետաղից, ռետինից, ապակուց պատրաստված բժշկական նշանակության իրեր՝ (այդ թվում միանվագ օգտագործման) ներառյալ վիրաբուժական և ատամնաբուժական իրերը, կոշտ և ճկուն էնդոսկոպներ և դրանց գործիքներ, Ատամնապրոթեզային տպվածքներ, կաղապարներ Թքարտածծիչ սարքեր, ասպիրացիոն համակարգեր, ռետինե խողովակ, տարա	3,0	60	Ընկղմում
Նարկոզա-շնչառական ապարատներ և դրանց հարմարանքներ՝ ներառյալ ռետինե խողովակները	3,0	60	Ընկղմում

Աշխատանքային լուծույթի նախնական ջերմաստիճանը (42±2) ախտահանման պահաժամի ընթացքում չի ապահովվում:

Ըստ հրավերի 17-րդ չափաբաժնի պահանջը եղել է 80 լիտր խտանյութ:

1. **Անիոզիմ ԴԴ1** 80 լիտր խտանյութից, ստացվում է 0,5% -ոց 16000 լիտր աշխատանքային լուծույթ գործիքների ախտահանման համար, որը անհրաժեշտ է բավարարելու համար «Աբովյան Ծննդատուն» ՊՓԲԸ-ի կարիքները:

Անիոզիմ ԴԴ1 80 լիտրի (0,5% -ոց 16000 լիտր աշխատանքային լուծույթ) գնային առաջարկը կազմել է 1.296.000 դրամ

լիտր աշխատանքային լուծույթի արժեքը կազմում է 1.296.000 /16000= 81 դրամ:

2. Մեգաբակ 80 լիտր խտանյութից, ստացվում է 3%-ոց 2667 լիտր աշխատանքային լուծույթ գործիքների ախտահանման համար, որը բավարար չէ «Աբովյան Ծննդատուն» ՊՓԲԸ-ի կարիքների բավարարելու համար:

Մեգաբակ 80 լիտրի (3% -ոց 2667 լիտր աշխատանքային լուծույթ) գնային առաջարկը կազմել է 752.000 դրամ

3. 1 լիտր աշխատանքային լուծույթի արժեքը կազմում է 752.000/2667= 282 դրամ:

Վերլուծելով վերոնշյալը, կարելի է տեսնել, որ «Աբովյան Ծննդատուն» ՊՓԲԸ-ի կարիքները հոգալու համար անհրաժեշտ վերջնական աշխատանքային լուծույթի ծավալը ապահովելու համար, «Աբովյան Ծննդատուն» ՊՓԲԸ-ն Մեգաբակ խտանյութը գնելու դեպքում պետք է գներ մոտ 6 անգամ ավելի շատ խտանյութ՝ 16000 լիտր վերջնական աշխատանքային լուծույթ ստանալու համար, և օգտագործել գնման համար մոտ 4.512.000 դրամ:

Անիոզիմ ԴԴ
16000 լիտր 0,5% աշխատանքային լուծութի գինը կազմում է՝ 1.296.000 դրամ
16000լիտր*81դրամ=1.296.000 դրամ

Մեգաբակ
16000 լիտր 3% աշխատանքային լուծութի գինը կազմում է՝ 4.511.436 դրամ
16000լիտր*282դրամ=4.512.000 դրամ

Այսինքն՝ ձեռք չբերելով Անիոզիմ ԴԴ1 խտանյութը, «Աբովյան Ծննդատուն» ՊՓԲԸ-ն չէր ապահովի իր կարիքները հոգալու համար անհրաժեշտ վերջնական աշխատանքային լուծույթի ծավալը, այն է 16000 լիտր:

«Աբովյան Ծննդատուն» ՊՓԲԸ-ն 16000 լիտր վերջնական աշխատանքային լուծույթի ծավալը ապահովելու համար Մեգաբակ տիպի ախտահանիչ գնելու դեպքում կկատարեր 3.216.000 դրամի գերածախս:

Բացի վերը նշված գնային համեմատականից, կարելի է նշել նաև Մեգաբակ նյութի օգտագործման համար անհարմարավետությունը՝

Անիոզիմ ԴԴ1 – ախտահանման պահաժամը 15 րոպե

Մեգաբակ – ախտահանման պահաժամը 60 րոպե, Աշխտանքային լուծույթի նախնական ջերմաստիճանը 42±2 աստիճան: Չունի էնզիմատիկ մաքրում:

Հաշվի առնելով ստացվող վերջնական աշխատանքային լուծույթների արժեքները և ծավալների համեմատականը, «Աբովյան Ծննդատուն» ՊՓԲԸ-ի գնահատող հանձնաժողովը, վերագնահատել է մրցույթի արդյունքները և որպես մրցույթի 17-րդ չափաբաժնի հաղթող է ճանաչել Արմենֆարմ ՍՊԸ-ին:

«Աբովյան Ծննդատուն» ՊՓԲԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 20.02.2018թ. ժամը 12:25-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

Վերը նշված դիրքորոշումը պնդել է նաև ԳԲԽ-ԱՄ-2018/25 բողոքով որպես երրորդ կողմ ներգրավված «Արմենֆարմ» ՍՊԸ-ն:

3. <u>ԳԲԽ-ԱՄ-2018/25 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ԳԲԽ-ԱՄ-2018/25 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Աբովյան Ծննդատուն» ՊՓԲԸ-ի կողմից «Աբովյան Ծննդատուն» ՊՓԲԸ-ի կարիքների համար՝ քիմիական նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԱԲԾ-ԳՀԱՊՁԲ18/03» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել նաև «Խաչպար» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի հրավերով թիվ 17-րդ չափաբաժնի համար նախատեսվել է գնման առարկայի հետևյալ տեխնիկական բնութագիրը.

Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Անվանումը և ապրանքային նշանը	Տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր քանակը
17	Անիոզիմ ԴԴ1	1լիտր	հեղուկ	80

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.02.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Խաչպար» ՍՊԸ-ն թիվ 17-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին սահմանված կարգով ծանուցվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնելու որակավորման չափանիշները հիմնավորող Ընթացակարգի հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.02.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 1.2 ենթակետի համաձայն՝ «Խաչպար» ՍՊԸ-ն ներկայացրել է հրավերով սահմանված 6-րդ հավելվածով նախատեսված գրությունը և առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, համաձայն՝ հավելված 6.1-ի:

5. Նույն ենթակետով կայացված որոշմամբ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ N 12 և N 17 չափաբաժինների մասով գնային առաջարկներով 1-ին տեղ էին զբաղեցրել համապատասխանաբար «Ադամանդ-Մեդ» ՍՊԸ-ն և «Խաչպար» ՍՊԸ-ն, սակայն ուսումնասիրելով տվյալ չափաբաժիններով առաջարկվող նյութերի օգտագործման հրահանգները՝ հաղթող մասնակից է ճանաչվում «Արմենֆարմ» ՍՊԸ-ն, մասնավորապես.

«Արմենֆարմ» ՍՊԸ-ն առաջարկում է N 12 չափաբաժնով 0,25% և N 17 չափաբաժնով 0,5% լուծույթներ, որոնք պայքարում են հիվանդաբեր բոլոր հարուցիչների /վիրուսների, բակտերիաներ, սնկեր, տուբերկուլյոզ/ դեմ 15 րոպեի ընթացքում միանգամից:

«Ադամանդ-Մեդ» ՍՊԸ-ն և «Խաչպար» ՍՊԸ-ն առաջարկում են ամեն հարուցիչի դեմ պայքարի համար տարբեր խտությամբ լուծույթներ՝ առավելագույնը մինչև 3% տուբերկուլյոզի հարուցիչի դեմ պայքարի համար:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հիվանդանոցի համար անհրաժեշտ է ախտահանիչ լուծույթ, որը կպայքարի բոլոր հարուցիչների դեմ միաժամանակ, ուստի անհրաժեշտ կլինի պատրաստել.

- N 17 չափաբաժնով՝ 0,5 % Անիոզիմ ԴԴ1-ից, որի 1 լիտր աշխատանքային լուծույթի արժեքը կկազմի՝ 81 դրամ, իսկ 3% Մեգաբակից, որի 1 լիտր աշխատանքային լուծույթի արժեքը կկազմի՝ 282 դրամ:

N 12 չափաբաժնով՝ 0,25% Սուրֆանիուսից, որի 1 լիտր աշխատանքային լուծույթի արժեքը կկազմի՝ 22 դրամ, իսկ 2% Աստրադեզ լայթից, որի 1 լիտր աշխատանքային լուծույթի արժեքը կկազմի՝ 112 դրամ:

6. Նույն արձանագրության՝ 2.1 ենթակետով կայացված որոշմամբ թիվ 12-րդ և 17-րդ չափաբաժինների մասով հաղթող մասնակից է ճանաչվել «Արմենֆարմ» ՍՊԸ-ն:

4. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը, ուսումնասիրելով «Խաչպար» ՍՊԸ-ի 16.02.2018թ. բողոքը և «Աբովյանի ծննդատուն» ՊՓԲԸ-ի 22.02.2018թ. գրությունը՝ կից նյութերով, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝

1) բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, կամ

2) այն մասնակցին ընտրելու մեթոդով, որի առաջարկած գնին և ոչ գնային չափանիշներին տրված գործակիցների հանրագումարը ամենաբարձրն է: Այս մեթոդի կիրառման դեպքում հայտերը գնահատելիս հրավերով սահմանած դեպքերում և կարգով, առաջարկվող գնից բացի, հաշվի են առնվում ոչ գնային այլ չափանիշներ: Ոչ գնային չափանիշները պետք է փոխկապակցված լինեն պայմանագրի առարկայի հետ և դրանց հարաբերական կշիռները ներկայացվեն հրավերի մեջ:

Նույն հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 6-րդ և 7-րդ մասերի համաձայն՝

5. Առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո՝ հրավերով սահմանված ժամկետում՝

1) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

6. Հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

7. Սույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ գնահատման արդյունքում հայտը անբավարար գնահատվելու դեպքում հանձնաժողովը փաստաթղթերը ներկայացնելու պահանջ է առաջադրում հաջորդ տեղը զբաղեցրած մասնակցին:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին:

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

«Աբովյան Ծննդատուն» ՊՓԲԸ-ի կողմից «Աբովյան Ծննդատուն» ՊՓԲԸ-ի կարիքների համար՝ քիմիական նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԱԲԾ-ԳՀԱՊՁԲ18/03» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտեր են ներկայացրել «Խաչպար» ՍՊԸ-ն, «Ադամանդ-Մեդ» ՍՊԸ-ն և «Արմենֆարմ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի հրավերով թիվ 17-րդ չափաբաժնի համար նախատեսվել է գնման առարկայի հետևյալ տեխնիկական բնութագիրը.

Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Անվանումը և ապրանքային նշանը	Տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր քանակը
17	Անիոզիմ ԴԴ1	1լիտր	հեղուկ	80

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.02.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Խաչպար» ՍՊԸ-ն թիվ 17-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին սահմանված կարգով ծանուցվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնելու որակավորման չափանիշները հիմնավորող Ընթացակարգի հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.02.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 1.2 ենթակետի համաձայն՝ «Խաչպար» ՍՊԸ-ն ներկայացրել է հրավերով սահմանված 6-րդ հավելվածով նախատեսված գրությունը և առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, համաձայն՝ հավելված 6.1-ի:

Ընկերության կողմից հրավերի թիվ 6.1 հավելվածով թիվ 17-րդ չափաբաժնի մասով ներկայացվել է առաջարկվող ապրանքի հետևյալ նկարագիրը.

Չափաբաժնի համարը	Անվանումը	Ապրանքային նշանը	Արտադրողի անվանումը	Ծագման երկիրը	Տեխնիկական բնութագրերը

17	«Մեգաբակ խտանյութ, 1 լ»	«Մեգաբակ խտանյութ, 1 լ»	Ինտերսեն Պլյուս	ՌԴ	«Մեգաբակ խտանյութ 1լ», աշխատանքային պատրաստի լուծույթը պիտանի է 41 օր. նախատեսված է բազմակի օգտագործման համար: Ախտահանիչ միջոցը օժտված է հակամանրէային ակտիվությամբ գրամբացասական գրամդրական մանրէների նկատմամբ, (այդ թվում նա՝ տուբերկուլյոզի հարուցիչների, թեստավորված Միկոբակտերիում տեռոայի նկատմամբ)., ներհիվանդանոցային և անաէրոբ վարակների, Կանդիդա և Տրիխոֆիտոն տեսակի սնկերի, բորբոսասնկերի (թեստավորված Ասպերգիլուս նիգերի համար), վիրուսների (Կոքսակի ECHO, պոլիոմիելիտի, ընդերային, արտաընդերային հեպատիտներ Ա, Բ, Տ և այլն, ՄԻԱՎ, ատիպիկ թոքաբորբ, գրիպի, այդ թվում նաև՝ H5N1, H1N1, հերպեսի, ադենովիրուսների և այլն), հատուկ վտանգավոր վարակների հարուցիչների (ժանտախտ, խոլերա, տուլարեմիա), միջոցն օժտված է հատկություններով մակաբուծային հիվնադությունների հարուցիչների (նախակենդանիների ցիստեր և օոցիստեր, որդերի ձվեր և թրթուրներ) նկատմամբ: Ախտահանիչ նյութը նախատեսված է բժշկական նշանակության գործիքների, էնդոսկոպների ախտահանման և նախամանրէազերծումային նեֆնոգեն մակերեսային ակտիվ նյութեր և այլ բաղադրիչներ: Միջոցը նախատեսված է որպես ախտահանիչ մեծ և փոքր մակերեսների համար, բժշկական նշանակության իրերի, կոշտ և ճկուն էնդոսկոպերի և դրանց գործիքների նախամանրէազերծումային մաքրման համար: Ունի ԵՏՄ սերտիֆիկատ և ՀՀ ԱՆ-ի կողմից հաստատված

					մեթոդական հրահանգ՝ առ 10 հունիսի 2016թ. թիվ 1794-Ա:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.02.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 1.2 ենթակետով կայացված որոշմամբ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ N 12 և N 17 չափաբաժինների մասով գնային առաջարկներով 1-ին տեղ էին զբաղեցրել համապատասխանաբար «Ադամանդ-Մեդ» ՍՊԸ-ն և «Խաչպար» ՍՊԸ-ն, սակայն ուսումնասիրելով տվյալ չափաբաժիններով առաջարկվող նյութերի օգտագործման հրահանգները՝ հաղթող մասնակից է ճանաչվում «Արմենֆարմ» ՍՊԸ-ն, մասնավորապես.

«Արմենֆարմ» ՍՊԸ-ն առաջարկում է N 12 չափաբաժնով 0,25% և N 17 չափաբաժնով 0,5% լուծույթներ, որոնք պայքարում են հիվանդաբեր բոլոր հարուցիչների /վիրուսների, բակտերիաներ, սնկեր, տուբերկուլյոզ/ դեմ 15 րոպեի ընթացքում միանգամից:

«Ադամանդ-Մեդ» ՍՊԸ-ն և «Խաչպար» ՍՊԸ-ն առաջարկում են ամեն հարուցիչի դեմ պայքարի համար տարբեր խտությամբ լուծույթներ՝ առավելագույնը մինչև 3% տուբերկուլյոզի հարուցիչի դեմ պայքարի համար:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հիվանդանոցի համար անհրաժեշտ է ախտահանիչ լուծույթ, որը կպայքարի բոլոր հարուցիչների դեմ միաժամանակ, ուստի անհրաժեշտ կլինի պատրաստել.

- N 17 չափաբաժնով՝ 0,5 % Անիոզիմ ԴԴ1-ից, որի 1 լիտր աշխատանքային լուծույթի արժեքը կկազմի՝ 81 դրամ, իսկ 3% Մեգաբակից, որի 1 լիտր աշխատանքային լուծույթի արժեքը կկազմի՝ 282 դրամ:

N 12 չափաբաժնով՝ 0,25% Սուրֆանիուսից, որի 1 լիտր աշխատանքային լուծույթի արժեքը կկազմի՝ 22 դրամ, իսկ 2% Աստրադեզ լայթից, որի 1 լիտր աշխատանքային լուծույթի արժեքը կկազմի՝ 112 դրամ:

Խորհուրդն արձանագրում է, որ ԳԲԽ-ԱՄ-2018/29 բողոքով տեղի ունեցած նիստի ժամանակ Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնել է, որ հաշվի առնելով ընկերությունների կողմից ներկայացված բացարձակ գնային առաջարկները՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 05.02.2018թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ թիվ 12-րդ և 17-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցնող մասնակից է

ճանաչել «Ադամանդ Մեդ» ՍՊԸ-ին, երկրորդ տեղ՝ «Խաչպար» ՍՊԸ-ին, երրորդ տեղ՝ «Արմենֆարմ» ՍՊԸ-ին, իսկ 17-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչել «Խաչպար» ՍՊԸ-ին, իսկ երկրորդ տեղ՝ «Արմենֆարմ» ՍՊԸ-ին:

Այնուհետև, հրավերով սահմանված պահանջի համաձայն՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցները ներկայացրել են իրենց կողմից առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը, որից հետո մասնագիտական տեսանկյունից ուսումնասիրելով առաջարկվող նյութերը և դրանց << Առողջապահության Նախարարության մեթոդական հրահանգները, օգտագործման ռեժիմները, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը վերագնահատել և 15.02.2018թ. կազմել է նիստի թիվ 4 արձանագրությունը, համաձայն որի թիվ 12-րդ և 17-րդ չափաբաժինների մասով հաղթող մասնակից է ճանաչվել «Արմենֆարմ» ՍՊԸ-ն:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը***, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ ***առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝***

1) բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ ***նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով***, կամ

2) ***այն մասնակցին ընտրելու մեթոդով, որի առաջարկած գնին և ոչ գնային չափանիշներին տրված գործակիցների հանրագումարը ամենաբարձրն է: Այս մեթոդի կիրառման դեպքում հայտերը գնահատելիս հրավերով սահմանած դեպքերում և կարգով, առաջարկվող գնից բացի, հաշվի են առնվում ոչ գնային այլ չափանիշներ:*** Ոչ գնային չափանիշները պետք է փոխկապակցված լինեն պայմանագրի առարկայի հետ և դրանց հարաբերական կշիռները ներկայացվեն հրավերի մեջ:

Ամփոփելով վերոգրյալը, Խորհուրդը գտնում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը Ընթացակարգի թիվ 17-րդ չափաբաժնի մասով Օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչելով «Խաչպար» ՍՊԸ-ին, այնուհետև գնահատման փուլում վերագնահատելով և մերժելով վերջինիս հայտը այն չափորոշիչներով, որոնք նախատեսված չեն Ընթացակարգի հրավերի

թիվ 17-րդ չափաբաժնով, գործել է վերը նշված նորմերով և Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջների խախտմամբ:

Խորհուրդը գտնում է, որ Պատվիրատուն վերագնահատելով առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների հայտերը գործել է ոչ իրավաչափ, քանի որ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հայտերը վերագնահատելու լիազորություններ չունի:

Միաժամանակ Խորհուրդը գտնում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը Ընթացակարգի թիվ 12-րդ չափաբաժնի մասով մերժելով «Ադաման-Մեդ» ՍՊԸ-ի հայտը և հաղթող մասնակից ճանաչելով նշված չափաբաժնի մասով երրորդ տեղ զբաղեցնող մասնակցին՝ «Արմենֆարմ» ՍՊԸ-ին, գործել է Օրենքի 34-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված պահանջի խախտմամբ, քանի որ վերը նշված հոդվածի համաձայն՝ գնահատման արդյունքում մասնակցի հայտը անբավարար գնահատվելու դեպքում հանձնաժողովը փաստաթղթերը ներկայացնելու պահանջ է առաջադրում հաջորդ տեղը զբաղեցրած մասնակցին, իսկ թիվ 12-րդ չափաբաժնի մասով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.02.2018թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ երկրորդ տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Խաչպար» ՍՊԸ-ն, ուստի Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը Օրենքի 34-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ փաստաթղթերը ներկայացնելու պահանջ պետք է առաջադրեր «Խաչպար» ՍՊԸ-ին, այլ ոչ՝ երրորդ տեղ զբաղեցրած «Արմենֆարմ» ՍՊԸ-ին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 16.02.2018թ. ներկայացված բողոքը բավարարել, մասնավորապես՝

1. Պարտավորեցնել «ԱԲԾ-ԳՀԱՊՁԲ-18/03» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնելու 15.02.2018թ. նիստի թիվ 4 արձանագրության 1.2

ենթակետով կայացրած Ընթացակարգի 17-րդ չափաբաժնի մասով «Խաչպար» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

2. Պարտավորեցնել «ԱԲԾ-ԳՀԱՊՁԲ-18/03» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնելու 15.02.2018թ. նիստի թիվ 4 արձանագրության 1.2 ենթակետով կայացրած Ընթացակարգի 12-րդ չափաբաժնի մասով «Արմեն Ֆարմ ՍՊԸ-ին հաղթող մասնակից ճանաչելու մասին որոշումը:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ